



**ՎԱՀԱՆ ԵՊՍ. ՏԵՐՅԱՆ**  
(Փոխանորդ Արքարատյան թեմի)

**ԷջՄԻԱԾՆԻ ԴՊՐՈՑԸ 19-ՐԴ ԴԱՐՈՒՄ\***

Շրջանը սկսվում է Արևելյան Հայաստանի պարսկական լծից ոռուների կողմից ազատագրումով: Եփրեմյան շրջանը և՝ Վարչական, և՝ դպրոցական տեսակետից արդյունաշատ է:

1813 թվին վերակազմվում է Էջմիածնի դպրոցը. «Վայելու ևս խորհրդով և ազգասիրական փութոյ եռանդեեամբ սկիզբն առնել հիմնարկութեան մեծակառոյց ուսումնարանին էջմիածնի ի հիւսիսոյ յարնելից վանացն ի վերայ տանեաց դասակարգի սենեկաց միաբանից, որ զառաջինն լեալ ասի պատրիարքանն տեառն Փիլիպոսի կաթողիկոսի, յաւարտ հասուցանէ զայն հոյակապ շինուածն յամի 1813, ըստ ցուցանելոյ երից արձանագրոց ուսումնարանին, որ զեւ ևս է եղեալ յորոշեալ ճակատամեջսն դրանց նորին...»<sup>43</sup>:

Ըստ Հայաստանի պետական պատմական արխիվի «Եփրեմ կաթողիկոսն կառոյց լԷջմիածնի զքանի սենեկան յարնելեան կողմն տաճարին (որ է այժմեն մին ուսումնարան և տպարան, 1880 թ.) և անուանեաց զայն «Համալսարան» ոյր և վասն երեր յնդոկիայ զառաջնորդն նորա զԳերդ դրաբունի ի պաշտօն ուսուցչութեան և վերակացութեան»<sup>44</sup>:

\* Տե՛ս «Էջմիածն», № Բ, էջ 33:

<sup>43</sup> Չափարարումյան, նույնը, էջ 121:

<sup>44</sup> «Հայրենասեր», Զմիւնիա, հմք. 18, էջ 47:

1813 թվին կառուցված այս դպրանոցի ղեկավար ուժը, սակայն, Ներսես Աշտարակեցին էր: Իրոք, որ Աշտարակեցին մեծ գործունեություն է ցուցաբերել 1813 թ. բացված Էջմիածնի դպրոցին, այդ երեսում է նաև Արեկ Վարդապետ Միմիարյանի վկայությունից. «Յամի 1813... Ներսես հիմն էարկ բազմասենեակ ընտիր ուսումնարանին յարեւելից վանաց ի վերայ տանեաց սենեկաց միաբանից, որ զառաջինն լեալ է հայրապետանոց Փիլիպոս կաթողիկոսի»<sup>45</sup>:

Անձնից ավելի եռանդագին ճիգ էր ի գործ դնում Ներսես Աշտարակեցին, Փիլիպոս եպիսկոպոսի և Սերովք վարդապետի թետ: 1813 թ. Էջմիածնում դպրոցի վերացումը Աշտարակեցու հայրանակն էր:

Փիլիպոս եպիսկոպոսի և Սերովք վարդապետ Էջմիածնում, կաթողիկոսի նետ համայստրուրդ, ամեն կերպ աշխատում էին բարձրացնել նորաբաց դպրոցը և նրան տալ Սիմեոն կաթողիկոսի ժամանակվա փայլը:

«Յամի 1813-ի կաթողիկոսութեան Եփրեմայ նոր ի նորոյ կառուցին ուսումնարան բազմասենեակ յարնելս Տաճարին սրբոյ ի վերայ սենեկացն՝ որք առ ներքին պարապա ի տեղուց կաթողիկոսարանին Փիլիպոսի Հայրակեցոյ, որ շարունակեաց ուսումն ըստ առաջին կարգին մինչև ցամ տեառն

<sup>45</sup> «Հայրենասեր», հմք. 77, 1875:

1837»<sup>46</sup>: Այս դպրոցում ի թիվս այլոց սովորել են Խաչատոր Արովյանը և Մեսրոպ Թաղիադյանը<sup>47</sup>:

Այդ ժամանակ Էջմիածնում, հավանաբար և մյուս վանքերում, գոյություն ուներ ուսուցման երկու եղանակ՝ «խցի» և «վարժատուն»: Դժվար է ասել, թե դրանցից որն էր համեմատաբար տաճելի կամ օգտակար: Ցուց տալու համար, թե իրենք՝ ուսուցիչները, ինչ էին մտածում «վարժատուն» ձևի մասին, առաջ ենք բերում Թաղիադյանի պատմածը իր ընդունելության մասին: Տաճամյա երեխային հանձնում են Աշտարակեցուն, խնդրելով, որ ընդունի «վարժատուն»: Աշտարակեցին «հայեցեալ զամեներումք՝ որք շուրջն կային, ասաց. «Ափսու է զերեխայս ի դպրոցի տրորել, առեալ աշիք զդա առ գրադիք Յովհաննէս վարդապետ, և պատուի յինէն զայս տաշիք նմա, զի բարոք հետևեսցի դմա, մինչև տեսցոր»<sup>48</sup>:

Հայ հավաստի թվայների «խցի» պայմաններում սովորողը դառնում էր իր ուսուցիչ փոքրավորը (մոնիթ), ծառայում հրանի իր «ուսանողության» բոլոր տարիներին և միաժամանակ սովորում հրանից այն, ինչ ուսուցիչը ցանկանում էր կամ ի վիճակի էր տալ իրեն հանձնված աշակերտին:

Թաղիադյանը թողել է իր տպավորությունները ուսուցիչ՝ Հովհան Վարդապետի և հրագործի մասին: «Ամենին զորկ յազատական արուեստից լեզուին մերոյ»: Վարդապետի ամբողջ արժանիքը կապանում էր հրագեղեցիկ ձեռագրի և երգելու հմտության մեջ: Թաղիադյանը, իր ժամանակի բոլոր «խցի» դաստիարակությունն ստացող երեխաների պես, երկու տարի տառապում է Ժամագիրը, ապա երկամյա Շարակեց անգիր անելու վրա:

Եփրեմ կաթողիկոսը, Աշտարակեցին, Սեռովք վարդապետը դեմ էին ուսուցման սիստեմին և հասուկ կանոնադրություններով փորձում էին կանոնավորել ուսուցման եղանակը:

Եփրեման Վարդապետարանի հշանավոր ուսուցիչներից են Զաքարիա Վարդապետ և Պողոս Վարդապետ Ղարաբաղցի: Զաքարիան ավանդել է ճարտասանությունը: Երիտասարդ մոնղերն ու արեղաները մեծ սիրով հետևում էին հրա դասախության մասնակի: Դժբախտաբար Զաքարիայի ուսուցա-

կան գործունեությունը կարճ է տևում: Նրան վարչական գործով ուղարկում են Բայազետ, իսկ տեղը մարդ չի հշանակվում:

1816 թվին Էջմիածնի է գալիս Պողոս Վարդապետ Ղարաբաղցին, որը ավանդել է քերականություն:

«Պողոս Վարդապետը, հիմնականում մնալով միջնադարյան սխոլաստիկական գիտականության և ավանդական մանկավարժության մակարդակի վրա, այնուամենայնիվ, իր ժամանակի, մասնավորպես Էջմիածնի գիտուն համարված վանական երից շատ ավելի բարձր էր կանգնած»<sup>49</sup>:

Թաղիադյանը իր ուսուցիչն չափազանց բարձր գնահատական է տալիս իր հիջողություններում. «1816. Ցայս ամի եկն յԵջմիածնի մեծամուն վարդապետն առաքինութեանց Պողոս Ղարաբաղցի, որոյ անմահ և հոգերուի դաստիարակութեան յանձն եղեւ բազումք ի դպրաց և ի սարկաւագ ուխտին սրբոյ Էջմիածնի»:

«Երանի՝ որոց այսպիսի վարդապետի աշակերտացան դաստիարակութեամբ. առաւել ինչ ոչ ասեմ»<sup>50</sup>:

Եփրապական բարձրագույն կրթություն տեսած մարդու այս գնահատականը պերճախու փաստ է Պողոս Վարդապետի աշխատանքին և գիտության մասին:

Պողոս Վարդապետն էլ երկար չի մնում Էջմիածնում: Ենկնելիս նա հետև է վերցնում իր «ձեռնաստիք» դարձած Թաղիադյանին:

1830 թվին Հնդկաստանում արվեստից Մագիստրոս դարձած Թաղիադյանը Եփրեմ կաթողիկոսին խնդրում է իրեն թույլ տալ Էջմիածնի վարդապետանում դասավանդելու մասին: Կաթողիկոսը արձագանքում է հրա այդ ցանկության և հատուկ օրինության կոնդակով իր երեխենի սամին հրավիրում է Մայր Աթոռ, դասավանդելու համար<sup>51</sup>:

Սակայն Թաղիադյանի իդը չի իրականանում այդ օրերին: Ավելի ուշ հրան մենք կտեսնենք Էջմիածնում որպես ուսուցիչ:

Սեերյանը Խ. Արովյանին գրում է. «Մերուպ Թաղիադյանը, որի մասին գոյց է լած լինեք, գալով Հնդկաստանից, շատք է դնում մի դպրոց բանաւոր Վաղարշապատի ավեռակներում՝ հարենիքի որդիներին լուսավորելու համար: Հրաշք կլինի, եթե գլուխ գա, ինչպես ինքը հուս ունի»<sup>52</sup>:

<sup>46</sup> Սահմանական «Մ. Թաղիադյանը մանկավարժ», Երևան, 1959, էջ 19:

<sup>47</sup> Թաղիադյան, Յունը, էջ 9:

<sup>48</sup> Սահմանադարան, կաթողիկոսական դիվան, թ. 247, վ. 921:

<sup>49</sup> Դիվան Խ. Արովյանի, 1940, էջ 274, կազմուց և ծանօթագրեց Երվանդ Շահազիզ:

<sup>50</sup> Հովհաննես կաթողիկոս Շահմաթունյան. «Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառաց Արտաքարայ» հ. Ա., Էջմիածն, 1842, էջ 121:

<sup>51</sup> Տես մանրամասն «Հայ նոր գրականության պատմություն», Երևան, 1962, էջ 364:

<sup>52</sup> Մ. Թաղիադյան, «Ծանապարհորդություն ի Հայս», հ. Ա., Կալկաթա, 1847, էջ 3:

Հովհաննես Կարբեցուն գրած իր նամակում և սրբազնը ցաւկությունն է հայտառում, որպեսզի կարողությունը աշալութ հնատիք հայ ժողովորդ լուսավորության գործուն, իր շուրջը նախարարեղով լուսարտ, գիտուն անձնութ, որուցը նույն էր Խաղաղադաշնությունը: «Հարնա ահա ուսիք ի ներկայութեան, զս եւ ու աշխատեան. եղիցը ընկերք սրա բազում, բազու, բազու: Կամաք օգու աղուցին որդիք Հայաստանի և լուսաւորություն նոցա աեզ փառք անսեռանելի»<sup>53</sup>:

Խաղաղադաշնությունը 1832—34 թվերին Էջմիածնում ձեռնարկում է մանկավարժական աշխատանքի: «Սովորեցնելու հասար նա իր մոտ է հավաքում վասիք սարկավագներից շորու հոգի, «Ժառանգավորաց ուսումնարան» աշակերտներից Յ հոգի և դրանց հետ սկսում է պարապել քերականություն, տրամադրանություն և Աստվածաշունչ, ինչպես և պարապուս է գոյուական մի քանի տղաների հետ ևս»<sup>54</sup>:

Արեւ Վարդապետ Միհթարյանը նույնապես վկայում է, որ Թաղաղադաշնությունը 1831 թվին ուսուցիչ է նշանակվում Էջմիածնի դպրոցին. «Եամի 1831 ուսուցիչ կարգեցաւ ի նմին քերականութեան և ճարտավանութեան քաջակուտ վարժապետուն Սենրովք ՚. Խաղաղադանց, զորոյ զուսուցութեան բարձին զպտող համբակը աշակերտեալք լընթաց հնագեակ ամաց ջանակու աշխատասիրութեամբ ի մարզս արհեատիցն»<sup>55</sup>:

Ս. Էջմիածնի Վարդապետարանը իր գոյությունը շարունակում է նաև Եփեմի հաջորդ Հովհաննես Լ Կարբեցի կաթողիկոսի օրով (1831—1842): Թաղաղադաշնի հրաժարումից հետո պատեղ ուսուցիչ է Բրավում Գրիգոր Շաքարյանը, Ստեփաննոս արքեպիսկոպոս Արարատեանց և Խահակ Վարդապետ Կողբացի:

1836 թվին հրատարակվեց Պոլոտենիան: Այդ կանոնադրության համաձայն կաթողիկոսարանն ու թեմական կենտրոնները պետք է ունենային իրենց համապատասխան վարժարանները, պետությունից հաստատված ծրագրով և պետական վերահսկողության ներքո: Մանրամասնորեն ճշտվում էին ավանդություն ոչ միայն առարկաները, այլև նըրանց չափը: Կրթությունը պատահական մարդկանց ձեռքից առնվելով վստահվում էր պետությունից ճանաչված ուսուցիչներին: Պոլոտենիայի հոդվածներից 88-րդը սահմանում էր. «Էջմիածնի սեմինարիայի բարեկարգութեան, ուսման ընթացքի և այլոց վերահսկողութիւնը կախուած է պատրիարքի և պատրիարքության վերաբերյալ»<sup>56</sup>:

<sup>53</sup> Դիման Խ. Սրբազնի, 1940, էջ 88—89:

<sup>54</sup> Սամբուռան, Յոյնը, էջ 91:

<sup>55</sup> «Հայրենաներ», № 42:

ից և ծայրագոյն խորհրդից. իսկ թեմական սեմինարիաներինը եպիսկոպոսից և կոնսիստորիաներից»: (Պոլոտ. 113):

1838—1840 թվերից Էջմիածնի դպրոցը գործում է համառայի Պոլոտենիայի տրամադրությունների: «Եւ ահա ըստ ներկայ դրութեան միջոցաց մեծի Արոռոյու ուսանին ի նոյն ուսումնարանի աշակերտք ծառանգաւորք եկեղեցոյ ի Հայ և ի Երու լեզու՝ ըստ յատկացտավ ծամուց պատշաճ ասուց և ըստ բառանմանց ուսանելի առարկայց»<sup>57</sup>:

Մինույն 1837 թվականին ուսուցիչ է հրավարում. հայերեն և ուստերեն լեզուների համար Հակոբ Արգանյանցին՝ Թիֆլիսից, և ապա Խահակ քահանա Սահառունյանցին, որպես ուսուցիչ հայոց լեզվի և քերականության, ճարտավանության և քրիստոնեականութիւն, զթարգմանութիւն, զգայթականութիւն: Եւ երրորդում է գերեցականութիւն և զվայելչագրութիւն»:

Երկրորդ կարգի՝ «ուսանին ի հայումն՝ զքերականութիւնն, զքրիստոնեական, զսրագան պատութիւնն և այլն: Իսկ ի ոռու սկզբունք քերականութեան՝ զիասարակ ընթերցանութիւնն և զվայելչագրութիւնն: Եւ երրորդումն՝ զերկուց լեզուաց սկզբունք ազատական արհեատիւնն: Իսկ ի յերկրորդի դասաւան՝ ուսանին զիայ և զուու մանկավարժութիւն»<sup>58</sup>:

Հովհաննես Լ Կարբեցուն հաջորդում է Ներսաւ . Ե Աշտարակեցին (1843—1857 թ. թ.), որի օրոք և Էջմիածնում Վարդապետարանը շարունակվում է:

Որպես Էջմիածնի ուսումնասեր մարդ նա իր վարչական և հասարակական բազմազարդ ժամանակից մի մասը հատկացրել է ուսուցության: Միշտ մոտիկ ու քաջակերող է եղել դպրոցին ու նրան ծառայողներին: Նոր դպրոցական գործունեությունը շատ ավելի եռանդուն և արդյունավետ է եղել Թիֆլիսում իր առաջնորդության տարիներին, քանի կաթողիկոսության շրջանին: Վերջին շրջանին իրենից սպասված արդյունքը չտեսնելով, շատերը սուր կերպով քննադատել են նրա «անուստմասահրություն»-ը, մեղադրելով նրան, որ ավելի շատ տնտեսա-

<sup>56</sup> Երեցյան Ա., «Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք», Բ. Բ. Թիֆլիս, 1895, էջ 888—889:

<sup>57</sup> Սամբուռան, Յոյնը, հատ. Ա, էջ 121:

<sup>58</sup> «Հայրենաներ», 1845, թիր. 77:

կան ձեռնարկությունների հետևից է ընկել, փոխանակ հետևելու դպրոցական գործունեության, ինչպես որ իրեն պես զարգացած և փորձառու անձնավորությունից սպասելի էր: Այդ ևս սուր քննարարության ենթակալվեց իր անհամապատասխան նոր պարմանելիքին, ու մանավանդ, իր անձնական հմայքին: Արովյան, Թաղիառյան, Ա. Երեցյան, Ստ. Նազարյան, Սեղրակյան ծանր ու դառն խոսքեր ունեն այդ հարցին նվիրված: Ավելի ճշշտ է, սակայն, Օրմանյանի մոտեցումը խնդրին:

Ներսես Աշտարակեցին Թիֆլիսում իր հիմնած՝ իր անվան վարժարանի վրա էր կենտրոնացրել իր մտահոգությունը, որտեղ իր օրոք կար և մի բաժին եկեղեցականեր պատրաստելու համար, և օգտակարագույն կերպով ուզած նապատակին ծառապում էր ուժերի և միջոցների միացումից: Աշտարակեցին չէր ուզում իր ուժերը բաժանել, որպեսզի երկոքն էլ տկար և վիտիս ձգելով, որով այն հավանաբար, անպատճյան առաջնորդել: Այս բոլորը նկատի առնելով, Օրմանյան սրբազնը գրում է. «Ներսես ամենայն իրավամբ կրցավ Էջմիածնի մեջ նոր ուսումնական հաստատություն մը հիմնելու գաղափարը երկրորդական կարգի թողով, և առ այժմ իր ունեցած միջոցներով և անձերով միակ հաստատության մը վրա աշխատի, ուսկից բոլոր ժողովուրդ և բոլոր վիճակներ և Մայր Աթոռուն ալ հավասարապես օգտվին»<sup>59</sup>:

Այս բոլորն ասելուց հետո, մեր ձեռքի տակ կան փաստեր, որոնք խոսում են հակառակը, այն, որ Աշտարակեցին դեռևս Պետերբուրգ գտնված միջոցին ծրագրեր է մշակում իր ապագա գործունեության համար: Այդ ծրագրի մեջ էր մտնում ի միջի պայուղ նաև Մայր Աթոռոր օժտել բարձրագույն վարժարանուվ, որի մասին մենք տեղեկանում ենք Եփրեմ վարդապետ Ալյոնիշանի կաթողիկոսական տեղապահ Բարսեղ արքայիկոպոսին ուղղած նամակից. «...Խնդրեալ էր ևս՝ ամենամեծ գումար դրամոց յարքունի գանձուց առ կանգնելոյ յԱթոռող գգերահնչամկ սեմինարեալ: Ըստ այս օրինակաց և ի բանից սորին յայտնի իսկ է, թե աշխուժ է յոյժ մերում համազգականութեան և առաջին փոյթ սորա այս իսկ է յինելոց, զի լուսաւորեացէ զանազան գիտութեամբը գնողնորականութիւնս Աթոռոյդ, ուստի ի կամի սորա սկիզբն առնել խորհրդոցն (որպէս և իսկ ասէ ինքնին) բազ-

մաց ունի բացասել և արձակել ևս՝ մտանել ի կարգ աշխարհի»<sup>60</sup>:

Ի լուր այդ ծրագրի, խանդավառությունը մեծ էր: Ստ. Նազարյանը լոշորեն մտածում էր գնալ Էջմիածնի և պանտեղ բացվելիք դպրոցում դասեր սուսանել. «Ներսեսը... ահագին ժողովրդականություն վայելող այդ հոգևորականը, որ այնքան լավ հասկացել էր իր ազգի կրթական կարիքները, հավատ է ներշնչում նազարյանցին, թե այժմ կարելի է տեղափոխվել Հայաստան և գործել այնտեղ մի այդպիսի կաթողիկոսի հովանավորության տակ: Այդ պատճառով նա առաջարկում էր Ներսեսին բաց անել Էջմիածնում մի ճեմարան՝ հոգևորականների կրթության համար»<sup>61</sup>:

Սույն են տվյալներ, որ Ներսես Աշտարակեցին կաթողիկոսանալուց հետո Էջմիածնի վարդապետարանի համար մշակում է կանոնադրություն, այն ենթարկում Սինոդի քննության (1847 թ. ապրիլի 17-ին, 600 աշակերտի համար. դպրոցի նախագիծ է մշակում արքունի ճարտարապետ Ֆուն Բրանսիլե) ու հաստատման: Ծայվում են այդ վարդապետարանի նպատակները, ուսման ծրագրերն ու տարողությունը, կարգապահական հարցերը, զուրթական պայմանները և այլն և արձանագրում համապատական որոշումների հոդվածներում: Ցարական կառավարությունը հասուն օրենսդրությամբ պահանջում է ապահովել վարդապետարանի գործությունը և գործունեաթյունը, նրա գերազանց պատասխանատվությունը կաթողիկոսի վրա դնելով»<sup>62</sup>:

1844 թվի մայիսի 11-ին Ենոքին գործերի մինիստրին ուղած գրության մեջ Ներսեսը գանձատվում է, որ «Էջմիածնը դրամական միջոցներ չունի 1836 թ. կանոնադրությամբ նախատեսվող թեմական ուսումնարաններ կառուցելու և պահպանելու համար»<sup>63</sup>:

Ս. Էջմիածնի ժառանգավորաց վարժարանի վերատեսուչն է եղել Միքայել Պատկանյանը 1843 թ., որին և Սինոդը հանձնարարում է կազմել նոր կանոնադրություն, որովհետև 1816 թ. կազմած կանոնադրությունը արդեն իսկ գործածությունից դուրս էր եկել: Այս կանոնադրությունը, որը Սինոդի

<sup>59</sup> Ա. Եպս. Անդրակյան, «Հովհաննես եպիսկոպոս Շահնախտունանցի կենսագրութիւնը», Պետերբուրգ, 1898, էջ 150:

<sup>60</sup> Առ. «Ստեփաննոս Նազարյանց», Բ. Ա., Թիֆլիս, 1902, էջ 117—118:

<sup>61</sup> Տե՛ս մանրամանություններ, ՀՊՊ արխիվ, ֆոնդ 57, գործ 9, էջ 128թ-ից:

<sup>62</sup> Մանրամանություններ, կաթողիկոսական դիվան, թղթ. 110, վակ. 181:

կողմից հաստատվելուց հետո «կանոնադրություն» վասն հոգմուր դպրոցին էջմիածնի» վերևագրով հրապարակվել է Զմյուռնիայի «Ազգանորդ» թերթի 1845 թ. 79-րդ համարում։ Կանոնադրությունը, կամ կարգադրությունը բաղկացած է 40 հոդվածներից, որի առաջին կետում ասվում է.

«Հնդիանարական նպատակ դպրոցին է կրել զքարդարականություն մանկանց հոգեւորականց հայոց, տալ նոցա միջոց ստանալու զամենահարկաւոր գիտությունն հայոց և ուսաց լեզուաց, և կարուր հիմնեն ունանց յազգատական արթիւսից։ Հիմնադրել ի սիրու նոցա զճշմարիտու բարեպաշտություն և պատրաստել ի նոցանել զլուսաւորեալ և զքարեպաշտ անձնն ի ծառայություն Տամարին Սաստոծոյ և վասն կրելով զքարութեաւու գիտութեանց ի ձեռն նոցա։»

Սակայն, հակառակ պետական օժանդակության, հակառակ ավելի լուսավոր դարի և նպաստավոր պայմանների, քիչ թե շատ բազմակողմանի զարգացած ու կարող ուժերի աշխատանքին հակառակ, վարդապետանոցը չկարողացավ բարձրանալ Մովսես Տաթևացոյ կամ Սիմեոն Երևանցոյ օրով իր ունեցած փառքին ու փայլին։ Այսուհանդերձ Շահիսաթունյան եպիսկոպոսի կարճաւու տեսչության ժամանակ (1846—1849 թթ.) վարդապետանը զգայի վերելք ապրեց, որից հետո սկսեց նորից իր սրտմաշուր ծանր տեղբարիլ։

Աշտարակեցին և վերատեսուց Հովհաննես Շահիսաթունյանց եպիսկոպոսը ամեն շամբ թափում էին, որպեսզի կարողանային էջմիածնի դպրոցը հասցելի իր ցանկալի բարձրության։ Այդ որոշ չափով հաջողություն է հրանց։ Այդ դպրոցի սամերը ուսումը պարտելուց հետո դանակով կուսակրոն կամ ամուսնացյալ քահանա վերադառնում էին իրենց ժողովրդին և հայությունից կտրված, հայ լեզուն իսկ մոռացած իրենց ցեղակիցների շրջանում բորբոքում էին սեր դեպի հայ եկեղեցին, հայրենի լեզուն, հայրենիքը և այդ կերպով թումք կազմում ձուլման դեմ։

Դաստիարակության մեջ Աշտարակեցին շեշտը դնում էր հայրենասիրության և մարդասիրության վրա։ Ամեն ինչ պետք էր ծառայեր ազգապահպանման հարցին, իբրև գտարյուն հայ ապրելու և գործելու։ Նա պատփիրում էր «որքան լինիցի խօսել նոցա վասն աստուածապաշտութեանց, վասն աստուածասիրութեանց, վասն մարդասիրութեանց, վասն ազգասիրութեանց, վասն եղբայրասիրութեանց, վասն արդարութեանց և վասն կալում ի ներքով ամի և երկիրի Սաստոծոյ և ունելոյ զմէր ամենաբարեպաշտ առ եկեղեցի և առ ամենայն ազգն հայոց։ Զգուշ-

ցուցանել զքերքեզահայոց մանկունան ուսանել զիսկերենն, և ոչ մոռանալ զքերքեզերենն ի նոգ կալուվ, զի օսպրությունն նոցա և երկոցնց ընկերացն նոցին գրիգորապօլություն և դրիմեցուն շամիցի նեղել զնոսա պալատթեամբ հարկատրացն նոցուն, մանաւանն մաքրութեանց հանդերձիցն և ուից և գլուց նոցին»<sup>64</sup>։

Սայսպէս 1856 թվին ասվում է, թե այստեղ սովորում էին 32 աշակերտ։ Գյուտ եպիսկոպոս Տեր-Ղազարյանի մատենադարանում պահված արխիվում այդ մասին որոշ տրվյալներ կամ<sup>65</sup>։

Շահիսաթունյան Հովհաննես եպիսկոպոսից հետո էջմիածնի ժառանգավորաց ուսումնարանի տեսուց է նշանակվում բժիշկ Վասարյանը 1849 թ.։

1843—45 թթ. հրատարակված ս. Էջմիածնի դպրոցի կանոնադրությունը ներսեւ է կաթողիկոսը անքավարար է գտնում և Վասարյանին 1849 թ. հանձնաբարում է մշակելու նոր կանոնադրությունն, որը և վերատեսուց Վասարյանը կազմում է։ Սակայն այդ կանոնադրությունը, որը կազմվում է Վասարյանի և ուղղումներ է մտցվում Աշտարակեցու կողմից, գործադրության մեջ չի մտնում<sup>66</sup>։

1830—1850-ական թվականներին ս. Էջմիածնի վարդապետարանի նշանավոր ուսուցիչներից են հանդիսացել Մայր Աթոռի միաբաններից՝

1. Մակար աբեղա (հետագայում Ամենայն Հայոց կաթողիկոս Մակար Ա, 1885—1891 թթ.), որը դասավանդել է հայերենի քերականությունն, ճարտարանությունն և հայ ժողովրդությունն։

2. Եղիազար աբեղա՝ հարմարագրություն և երաժշտություն։ 3. Սրենիանու եպիսկոպոս։ 4. Երեմիա վարդապետ։ 5. Կարապետ վարդապետ Շահիսաթյան, որն ավարտել է Մովսեսի Լազարյան ճեմարանը և համրավավոր է իր հրատարակություններով։ 6. Մկրտիչ վարդապետ։ 7. Եսայի վարդապետ։

Մշարհականներից Հովհաննես Սիմեոնն անցը դասավանդել է ուսուերեն քերականությունն, չփառանությունն, այսինքն՝ մաթեմատիկական գիտություններ և ուսուերեն հարմարագրությունն, ինչպես նաև Լազարյանը, կամերական համալսարանն ավարտած առաջին կարգի բժիշկ Կ. Վասարյանը

<sup>64</sup> Մատենադարան, Երեցյանի արխիվ, թղթ. 152, վագ. 2:

<sup>65</sup> Մատենադարան, արխիվ Գյուտ եպիսկոպոս Տեր-Ղազարյանի, թղթ. 8, վագ. 18, 1856 թ.։

<sup>66</sup> Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 180, վագ. 420։

(որը և դպրոցի բժիշկն է եղել և վերատեսուչը, ինչպես նաև ուսուցիչը), Սիքայել Պատկանյանը, Սոսկվայի Բամալսարանն ավարտած Հ. Արգամյանը և այլք։

Ներեւու Սշտարակեցուն հաջորդում է Մատթեոս Ա. Կ. Պոլսեցին (1858—1865), որի հայրապետության օրոք և շարունակում է գործել և Եշմիածնի ժառանգավորաց վարժարան։

Սինչև կաթողիկոսանալը Մատթեոս Ա. հոչակլած էր թե՛ իրք հնուս քարոզի և աստվածաբան և թե՛ իրք ժողովրդական մարդ։ Մատթեոս Ա. մեծ ուշադրություն դարձեց ծխական դպրոցների բարեկարգման և ամոր հիմերի վրա դրվելու։ Նա առաջինն է, որ կազմեց ծխական հոգարածությունները, ժողովրդին տալով իր դպրոցների հանձանձնման և ղեկավարման պարտք ու ո հոգաբերը։ Հաստատեց Կանոնադրություն Ներսիսյան դպրոցի համար (Թիֆիսի), որը գործեց մինչև դպրոցի փակվելը։ Կանոնավորեց Մայր Աթոռի ձեռագրատունը, կազմել տվեց ցուցակ և այն տպագրել տվեց։ Այս բոլոր ցուց էին տալիս, որ նա ուսումնասեր անձնավորություն է և հույս էին ներշնչում վարդապետարանի բարձրացման մասին։

Այդ օրերին շատերը հաճախ կաթողիկոսին զգացնել էին տալիս, որ չսահմանափակվի վաճական կարիքները միայն ըկատի առնող մի վարդապետարանով, այլ այն դարձնի համագգային հաշանակությամբ մի ուսումնական հիմնարկ, որի շրջանավարտները կարողանան աշխատել և՛ իրք հոգեվորական, և՛ իրք աշխարհական կյանքի զանազան բնագավառներում։ Միքայել Նալբանդյանը Հնդկաստանից վերադարձին Լոնդոնից կաթողիկոսին ուղարձ իր 1862 թվի հունվարի 20 թվակիր նամակում հայտնելով, որ Կալկաթայի հայկական եկեղեցուն Եշմիածնին պատկանող զգալի մի գումար է կուտակվել, խնդրում է կարգադրություն անել՝ Եշմիածնում մասսայական դպրոց հիմնելու մասին։ «Գումարդ այդ, որ մենացեալ է անդր և որ մեասցէ, եթէ ոչ պահանջեցէք, կարէ սատար լինել Զեզ, թերևս ի ժինութիւն դպրոցին, զոր հիմնէիք տակաին ամօք իբր երկու յառաջ»<sup>67</sup>։

Նալբանդյանի վերօնիշյալ վկայությունից պարզվում է և այն, որ Մատթեոս Ա. կաթողիկոսը շուրջ 1860-ական թվականներին նոտարվել է Եշմիածնի դպրոցը առավել ևս ենացնելու և այդ իսկ պատճառով նույն ալբանդյանը 1860 թվականի աշնանը ս.

Եշմիածնում կառուցվելիք դպրոցի օգտին նվիրում է հարյուր ոորի իր միջոցներից<sup>68</sup>։

1862 թվականի սեպտեմբերի 8-ին և Եշմիածնի ժառանգավորաց վարժարան է այցելուն Հակոբ Կարինյանը, որն իր տպագրություններն է գրում։ Լսենք նրան։

«Սեպտեմբերի 8-ին գնացինք այցելության Եշմիածնի ուսումնարանին, մեր գնացած ժամանակը աշակերտները ճաշ ուտելու էին զնացել։ Թեպես ուսումնարանը այն օրից երբ հանձնված է տեսչության Եղիազար արքեպիսկոպոսին մի առանձին հոգացողության տակ է ի միասին բարեկարգության թե ըստ ուսումնականի և թե ըստ տնտեսական մասին, բաց ուսումնարանի սենյակները նաև աշակերտաց ննջարանները մութեն և անհարմար։

...Ուսումնարանի աշակերտքը Պ. Տեր-Հովհեփյանի ձեռամբ ինձ մոտ խրկել էին իրենց հայերեն շարադրությունը տեսանելու, ևս զննեցի և տեսա նոցա աշխույժը, ցանքը և ընդունակությունը։ Լավ գրում են հայերեն գրաքար լեզվով և շարադրության ցորերից երևում է, որ նոցա ուսումն ավելի կրոնական և պատմաբանական է, քան բանաստեղծական։ Ես լուրաքանչյոր շարադրության ներքո գրեցի իմ Ակատմունքներս և խրախույսներս և վերադարձի»<sup>69</sup>։

Մատթեոս Ա.-ի հաջորդը՝ Գևորգ Դ նոյնապիսի վարդապետարան գտավ Եշմիածնում, ինչպիսին եղել էր Սշտարակեցու կամ Եփրեմ կաթողիկոսի օրերին։ Այդ դրությունը ստիպեց նոր կաթողիկոսին արմատական քայլեր առնել վարդապետարանի մասին։

1874 թվին Գևորգ Դ-ին (1866—1885 թթ.) հաջողվեն բացել Գնորդյան մեմարան, բաց իր կաթողիկության վկարից իրեն ժառագություն մնացած ժառանգավորաց վարժարանը շարունակեց ապրել մինչև 1882 թվականը։

1868 թվին «Արարատ» ամսագրում շահեկան տեղեկությունների ենք հանդիպում Մայր Աթոռի ժառանգավորաց դպրոցի տարեվերջի թվականների ժամանակ ցուցաբերած առաջադիմության մասին<sup>70</sup>։

«Արարատ» ամսագիրը մեզ տալիս է տէղեկություններ նաև 1870 թվականի դպրոցի ուսման ծրագրի ու հառաջադիմության մասին։

Ս. Եշմիածնի վարժարանը աւապիսի դրության մեջ էր, երբ հրատապ հարց է դրվում նոյն ուսումնարան կառուցելու համար։

<sup>67</sup> Մ. Նալբանդյան, Երկերի ժողովածու, թ. Դ., 1949, էջ 122—128:

<sup>68</sup> Մատթեոսադրան, Սինոդի օրագրություններ, թղթ. 51, վալ. 196:

<sup>69</sup> «Կոռմնկ նայոց աշխարհին», 1862, № 5, էջ 374:

<sup>70</sup> «Արարատ», 1868, էջ 62:

Սմբատ Շահազիկ իր «Լուսնի վիշտը» պոեմում քննադատում էր ժամանակի կրթական հետամնաց սիստեմը և միակ եղբ՝ «փրկության դուռը» նաև տեսնում էր լուսավորության, համբեղիանուր ազգային կրթության մեջ:

Լուսավորությունը համարելով կյանքի վերափոխման միջոց բանատեղծն իր պոեմում առաջարկում է ակադեմիա հիմնել «Մայր Էջմիածնում».

«Ակադեմիա Մայր-Էջմիածնում,  
Նսիսագամ վանքի գավթին ու դրան,  
Ուր եռ է գալի այս ներկա օրուն  
Ընչաւեր արյուն, ախտեր անարժան»:

Հիրավի այդ երազանքը իրագործում է 1874 թվականին, երբ Գևորգ Դ-ը հիմնադրում է ս. Էջմիածնում Գևորգյան ճեմարանը:

Ծևմարանի հիմքը դրվում է 1869 թվականին, շենքի հիմնադրման նկարագրությունը մանրամասնորեն տպիչն է Ղազարոս Աղայանը<sup>71</sup>:

Ս. Էջմիածնի միաբանությունը առաջադրանքով՝ ճեմարանի աստվածաբանական կրթությունը ապահովելու մտադրությամբ մանկավարժական խորհուրդը 1881—1882 ուսումնական տարվա մեջ որոշում է միացնել ս. Էջմիածնի բազմադարյան ժառանգավորաց վարժարանը նորարաց ճեմարանին: Այդ բոլորի մասին կարդում ենք ճեմարանի վերատեսչի գեկուցագրում հետևյալը:

«Եւ զի աշակերտը ժառանգաւորաց դբարոցին հանապազօք յառատուու և յերեկացի յաճախէին ի ս. եկեղեցի ի ժամանացութիւն, զայս եւս ի նկատի առեալ Մանեկ. խորհրդոյն, որոշեաց տալ կատարել աշակերտաց ճեմարանի զայն պարտաւորութիւն, առա-

քելով զնոսա օր լսան օրէ լսան առանձին կարգի, ի ս. եկեղեցի ի դպրութիւն և ի սպասաւորութիւն: Ընդ որոշումն լիացն է Մանեկ. խորհրդում. Եթե յաջողիցի ճեմարանն պաշտօնեալու արժանաւորու պատրաստել ս. եկեղեցոյ ըղձից և նպատակի վեհական Հայրապետից, լսան բարեհաճ կամաց Զերոց հաստատէք զայն և թոյլ ետուք լսան ամեն առնել յատաշիկա և յամենայն տարուց, և որ կատարեցան իսկ: Նա փափակելի էր վարչութեան ճեմարանին՝ որպէս և ակն ունիմք յապագայի, զի ես երկրորդ և երրորդ դասարանքն փոխադրեցին ի վարժոց անդ իբրև ի լուսն ամբողջութեան դպրոցական մասին, և ի ճեմարանի աստ մնացեն միայն դպրոցական երեք դասարանը և ճեմարանական երեք լսարանը, որով և տնտեսութիւն ի ծախս և կանոնադրութիւն ի ներքին ընթացս ճեմարանի ինը արկօք»<sup>72</sup>:

Ժառանգավորացի կազմակուծմամբ և ճեմարանի առավել բարձրացման շնորհիվ, ս. Էջմիածնի Մայր Աթոռին կից բարձրագույն հոգևոր կրթարանը ոչ միայն հայ եկեղեցուն, այլև 19-րդ դարում հայ ազգային կյանքին տպիչն է բազմաթիվ երախտավորներ, որոնց անունները մինչև այսօր ել փայլում են մեր գրականության, պատմության, երաժշտության մեջ:

Ծևմարանն իր բացման օրից՝ 1874 թվականից, անընդեմ գործեց, և ունեցավ իր փայլուն շրջանը: Ծևմարանը փակվեց 1918 թվականին:

Ծնորհիվ Գևորգ Զ-ի ջանքերի 1945 թվականին ս. Էջմիածնում վերաբացվեց հոգևոր ճեմարանը, որն իր գոլությունը շարունակում է մինչև այսօր, տալով հայ եկեղեցուն ուսուական և նվիրյալ հոգևորականներ:

<sup>71</sup> Մատենադարան, արխիվ Գյուտ Խպիկոպոսի, թոք. 1, վավ. 14, էջ 11:

<sup>72</sup> «Արարատ», 1869, էջ 25: